**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով «ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/ 3» ծածկագրով գրասենյակային գույքի /կահույքի/» ձեռքբերման գնման հայտը հաստատելու մասին**

ք. Նոր Հաճն                                                            3 դեկտեմբերի 2025թ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 11-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերի պահանջները՝

1. Հաստատել **Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի** կարիքների համար գննաշման հարցման ընթացակարգով **«ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/ 3»** ծածկագրով **«Գրասենյակային գույքի/կահույքի/»** գնման հայտը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն արձանագրության 1-ին կետով ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորվելիք գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար **«Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի** պատվիրատուի ղեկավարին առաջարկել ներքոհիշյալ անձանց թեկնածությունը՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
------------------- **Հրաչիկ Աղաջանյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** ------------------- **Մանուշակ Պողոսյան**

------------------- **Կարեն Խեչոյան**

**Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝** ------------------- **Մանուշակ Պողոսյան**

**գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝** ------------------- **Հրաչիկ Աղաջանյան**

**Պատասխանատու ստորաբաժանման անդամ** ------------------- **Կարեն Խեչոյան**

# Արձանագրություն N 1

**ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով «ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/03» ծածկագրով գրասենյակային գույքի /կահույքի/» ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Նոր Հաճն — 3 դեկտեմբեր 2025թ.
ժամը 15:00

*Մասնակցում էին՝ Հանձնաժողովի նախագահ՝ Հրաչիկ Աղաջանյան*
*հանձնաժողովի անդամներ՝ Մանուշակ Պողոսյան*
*Կարեն Խեչոյան*
*քարտուղար՝ Ք.Բաղդասարյան*

## Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատել հրավերի և հայտարարության տեքստերը.
2. Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0*

## 1. Ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստերը հաստատելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետի և 31-րդ կետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում որոշեց.

1. Հաստատել **«ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/03» ծածկագրով՝ գրասենյակային գույքի /կահույքի/»** ձեռքբերման նպատակով գնանշման ընթացակարգի գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի տեքստը /կցվում է/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0*

## 2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

2.1 **«ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/03»** ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **2025թ. Դեկտեմբերի 12-ին, ժամը 15:30-ին, ք.Նոր Հաճն, Չարենցի փողոց 20 հասցեով:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0*

**Հանձնաժողովի նախագահ՝** ______________________ **Հրաչիկ Աղաջանյան**

**անդամներ՝** ______________________ **Մանուշակ Պողոսյան**

______________________ **Կարեն Խեչոյան**

**քարտուղար՝** ______________________ **Ք.Բաղդասարյան**

Հավելված
պատասխանատու ստորաբաժանման 3 դեկտեմբերի 2025թ.
կազմված արձանագրության

# ՀԱՅՏ

## «Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով «գրասենյակային գույքի /կահույքի» ձեռքբերման գնման

**Գնման առարկա են հանդիսանում՝**

| Չափաբաժինների համարները | Գնման գին | Չափաբաժնի անվանումը |
|---|---|---|
| 1 | 275 000 | Ուսուցչի սեղան |
| 2 | 980 000 | Գրապահարան |
| 3 | 95 000 | Գրատախտակ՝ ծալվող |
| 4 | 96000 | Աշխատանքային աթոռ |
| 5 | 150 000 | Ղեկավարի աթոռ |
| 6 | 130 000 | Զգեստապահարան |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Ապրանքի | | | |
|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ամբողջական անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
| 1 | 39121360 | ՈՒսուցչի սեղան | Ուսուցչի սեղան, չափսերը՝ 1200x600x760մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ 18մմ հաստությամբ, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանի առջևը փակվում է 18մմ հաստությամբ ՓՏՍ-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164x450x600մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանումում է աշխատանքային հարթության եզրին (տակից) և կողապատերի (ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը կշրջափակվեն 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է ամրացվի ոտիկներ՝ 5-6մմ բարձրությամբ: Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով: Սեղանը կունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410x460x690մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 130-150; 130-150; 250-350մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սալյասկա): Սեղանը, կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ ՓՏՍ-ի, բնափայտի երանգներով ոչ շատ մուգ գույնի: Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Կմախքը ամբողջությամբ լինի փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով:   |
| 2 | 39121520 | Գրապահարան | գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, արտաքին չափսերը՝ 820x410x2000մմ (LxԽxԲ): Գրապահարանը ունի 400մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 3-ը փակվում են եզրերը մշակված, թրծված սպիտակ, թափանցիկ 5-6 մմ հաստությամբ ապակե երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 3 ծղնիներով, իսկ ներքևի 2-ը՝ լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները պետք է ունենան մետաղական բռնակներ: Դարակները պետք է պետք է պատրաստված լինեն լամինացված 18մմ հաստության ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 0.8-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով(PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ, բաց գույնի (բացառությամբ սպիտակի): Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Գրապահարանի հետնապատը պետք է լինի 4մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն ՓՏՍ-ի գույնի: Պահարանը ամբողջ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյունն հենակի արտաքին չափսերն են՝ 800x380x100մմ (LxWxF), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: |
| 3 | 30195200 | *Գրատախտակ ծալվող* | գրատախտակ ծալվող՝ բաղկացած 3 մասից՝ 1000x3000մմ(750մմ+1500մմ+750մմ), գրատախտակի շարժական, փակվող մասերը անշարժ մասին ամրանում են ծխնիներով, փակված վիճակում գրատախտակի երկարությունը՝ 1500մմ:<br>Շարժական մասերը՝ երկկողմանի գրատախտակ: Գրատախտակի մակերևույթը կանաչ գույնի, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով: Գրատախտակի եզրագծերը պետք է պատրաստված լինեն ալյումինե պրոֆիլներով, իսկ անկյուններում պետք է տեղադրված լինեն պլաստիկ անկյունակներ: 1500 մմ-ոց հատվածի ներքևի մասի երկայնքով պետք է տեղադրված լինի ալյումինե դարակ՝ նախատեսված կավիճի համար, 50մմ լայնությամբ: Գրատախտակի միջուկը պետք է լինի, պատին ամրացվող մասում՝ միջին խտության փայտաթելային սալից (ՄԴՖ), իսկ բացվող փեղկեր՝ ստվարաթղթե հիմքով թեթև նյութից, ոչ մետաղից կամ մեկ այլ ծանր նյութից: Գրատախտակը պետք է ունենա պատից ամրացման համար բոլոր անհրաժեշտ պարագաները: Տեսքը՝ ըստ նմուշի /նկար-8/ կցվում է:<br> |
| 4 | 39111180 | *Աշխատանքային աթոռ* | Աշխատանքային աթոռ՝ ուսուցչի տեսքը՝ ըստ նմուշ-9.1, կցվում է: Աթոռ ուսուցչանոցի և բոլոր դասասենյակների համար: Աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև (30x15x2. 0մմ), կամ կլոր (Φ 20x1.2մմ) խողովակներից՝, հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասարաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով: Նստելատեղի բարձրությունը հատակից 450 մմ, թիկնակի բարձրությունը հատակից 800մմ: Նստելատեղի չափսերն են՝ 420x385մմ (առնվազն), տեսքը և չափերը՝ ըստ նմուշ-9.2 /նկար հ.1/, կցվում է: Թիկնակը և նստելատեղը պատրաստված լինեն 8-10 մմ հաստության նրբատախտակից, որին ամրացվում է առնվազն 15-25 մմ հաստության և 20-30 կգ/մ3 խտության սպունգ: Թիկնակը և նստատեղը երեսպատված կլինեն հաստ, որակյալ, ամուր, դժվարամաշ կտորով, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից: Թիկնակի վերևի հատվածում և մետաղական և փայտային մասերը ունեն կիսաշրջանի, օվալաձև տեսք, տեսքը և չափերը՝ ըստ նմուշ-9.3 /նկար հ.2/, կցվում է: ըստ կցված նմուշի /նմուշ-9.3/: Թիկնակի պաստառապատված մասի չափերն ըստ նկարների են 400մմx300մմ: Ոտքերի եզրեը(ծայրերը) պետք է խցանված լինեն պլաստիկե սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2մմ, տակի մասինը՝ 4-6մմ:<br><br><br><br><br> |
| 5 | 39111220 | *Ղեկավարի աթոռ* | բազկաթոռ՝ ղեկավարի՝ ղեկավարի աթոռ՝ շարժական բազկաթոռ հինգ անվակների վրա՝ միմյանց կապակցված հինգ թևանի ոտքով: Խաչուկը՝ ոտքը՝ քրոմապատ մետաղից, բռնակները քրոմապատ մետաղից արմունկի հենման հատվածները՝ փափուկ, արհեստական կաշվեպատ, բարձրության սահուն կարգավորմամբ՝ մեղմնացուցիչով: Նստատեղը և թիկնակը՝ փափուկ՝ 80-մմ-ից ոչ պակաս սպունգի հաստությամբ և 33-40% խտությամբ, պաստառապատված սև բարձրորակ արհեստական կաշվով կամ կտորով: Նստոցի չափերը /60x60/սմ-ից ոչ պակաս, թիկնակի բարձրությունը 75սմ-ից ոչ պակաս, ետ-առաջ կարգավորվող և ֆիքսվող: 140կգ բեռնվածության համար: Չափսերը՝ 550x560x750մմ: Տեսքը՝ ըստ նմուշի /նկար-11.1, 11.2, 11.3/ կցվում է: |

| | | | |
|---|---|---|---|
| | | |     |
| 6 | 39138400 | *զգեստապահարան* | զգեստապահարաններ-1՝ Զգեստապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, արտաքին չափսերը՝ 820x450x2000մմ (LxԽxԲ): Զգեստապահարանը վերևից ունի 400մմ բարձրությամբ 1 դարակաշար, որից ներքև, 82-85մմ հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ձող՝ համապատասխան ամրացումներով: Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից: Դռներն ամրացվում են 3-ական ծխնիներով: Դռները կունենան մետաղական բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0.8-1.2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ՓՏՍ-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ՝ 8մմ հաստությամբ: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800x420x100մմ (LxԽxԲ), որի  հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: |

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | |
|---|---|
| | ***Ապրանքի*** |

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Չափման միավորը | Միավոր գին/ՀՀ դրամ | Ընդհանուր գին/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատակարարման | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հասցեն | Ժամկետը** |
| 1 | հատ | 55000 | 275000 | 5 | Նոր Հաճն Չարենցի փողոց 20 հասցե | Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրում, բացառությամբ այն դեպքերի ,երբ մատակարարըհամաձայնվում է մատակարարել ավելի շուտ |
| 2 | հատ | 70000 | 980000 | 14 | Նոր Հաճն Չարենցի փողոց 20 հասցե | Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրում, բացառությամբ այն դեպքերի ,երբ մատակարարըհամաձայնվում է մատակարարել ավելի շուտ |
| 3 | հատ | 95000 | 95000 | 1 | Նոր Հաճն Չարենցի փողոց 20 հասցե | Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրում, բացառությամբ այն դեպքերի ,երբ մատակարարըհամաձայնվում է մատակարարել ավելի շուտ |
| 4 | հատ | 16000 | 96000 | 6 | Նոր Հաճն Չարենցի փողոց 20 հասցե | Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրում, բացառությամբ այն դեպքերի ,երբ մատակարարըհամաձայնվում է մատակարարել ավելի շուտ |
| 5 | հատ | 150000 | 150000 | 1 | Նոր Հաճն Չարենցի փողոց 20 հասցե | Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրում, բացառությամբ այն դեպքերի ,երբ մատակարարըհամաձայնվում է մատակարարել ավելի շուտ |
| 6 | հատ | 65000 | 130000 | 2 | Նոր Հաճն Չարենցի փողոց 20 հասցե | Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրում, բացառությամբ այն դեպքերի ,երբ մատակարարըհամաձայնվում է մատակարարել ավելի շուտ |

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39121360 | Ուսուցչի սեղան | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 100 | 100% |
| 2 | 39121520 | Գրապահարան | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 100 | 100% |
| 3 | 30195200 | Գրատախտակ ծալվող | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 100 | 100% |
| 4 | 39111180 | Աշխատանքային աթոռ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 100 | 100% |
| 5 | 39111220 | Ղեկավարի աթոռ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 100 | 100% |
| 6 | 39138400 | զգեստապահարան | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 100 | 100% |
| 1 | 39121360 | Ուսուցչի սեղան | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 100 | 100% |

**Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ -------------------- Մանուշակ Պողոսյան**

**գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ -------------------- Հրաչիկ Աղաջանյան**

**Պատասխանատու ստորաբաժանման անդամ -------------------- Կարեն Խեչոյան**